

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐՏԻ 1

ՄԱՐՏԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиси, редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնները ընդունվում է ամէն լիցումով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ

Երկարատեւ և ծանր հիւանդութիւնից յետոյ փետրվարի 27-ին վախճանվեց

ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍԵԱՆ ԱՐԻԵԱՆՏՆԸ

որի մասին հոգեկան վշտով յայտնում են ազգականներին և ծանոթներին հանգուցեալի այրին՝ Մարգարիտ Միքայելեան Արիւսեանց իր աղջկայ և փեսայի հետ միասին Աթիթքը մարտի 1-ին և 2-ին երեկոյան ժամը 7-ին Յուդարկաւորութիւնը գէպի Մոզմուս. Գեորգեկեղեցին մարտի 3-ին, հիւզարթի, առաւօտեան 10¹/₂ ժամին, հանգուցեալի սեփական տնից—Գոյովինսկի պողոտէի վրա՝ Թաղումը Խօջ/վանքի գերեզմանատանը:

(Ե. չ. հ.)

ԲՈՎԱՆԵՆԻՐԻՆ

Բաղաժական տեսութիւն. Անանուն դիմումներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Բագուի աղէտի զոհերի օգտին. Բագուի կոտորածի հայ զոհերի ցուցակը. Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Գերմանիայից.—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ:

ԲԱՆԱԲԱՆԱՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Մանջուրական պատերազմական դաշտը բնութիւն է ամբողջ աշխարհի ուշադրութիւնը իր վրա:

Հեռագրական գործակալութիւնը հաղորդեց, որ Մուկդէնը ընկել է եսպոսանցիներէ ձեռքը և որ պատերազմական գործողութիւններէ բնութեան տեղափոխվել է բոլորովին նոր կէտեր—այն է Մուկդէնից դէպի հիւսիս և դէպի արեւելք:

Տասնհինգ օր շարունակվող պատերազմական գործողութիւնները, որոնք տեղի ունէին Շախէ և Պոնիւէ գետերի ափերում, վերջացան նրանով, որ ռուսական զօրքերը այժմ դիմում են դէպի Տեւրի: Ռուսական զօրքերի մի մասը գերել է ընկել: Հեռագրական գործակալութեան ցուցումով գերիներէ թիւն է 30,000 հոգի: Եսպոսանցիները իրանց կողմից կորցրել են պատերազմում մօտ 41,000 հոգի: Ռուսներին վերադարձել են 46,391 զինուոր և 1190 օֆիցէր:

Ամեն օր սպասվում են կարևոր հաղորդաբերութիւններ պատերազմի մասին դաշտից:

ԱՆՆԱՆԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Վերջին օրերս մենք առիթներ ունեցանք լսելու, որ թէ Թիֆլիսում և թէ Բագուում մի շարք անձինք ստացել են անանիւն Նամակները գնալու քանակական բովանդակութեամբ:

Վրացի յայտնի գրողներէ մէկը ստացել է մի անանիւն Նամակ, որ նրան ուղղված է իւր թէ հայերի կողմից: Ուղեք են նա Նամակ գրողները և արգօշ հայեր են թէ ոչ, կամ ինչ տեսակ հայեր են, ինչ հասկացողութեան տէր մարդիկ—այդ մենք չը գիտենք և չենք կարող գիտենալ: Եւ որովհետեւ անյայտ են գրողները, անշուշտ չը կան այն անձինք, որոնց հետ պէտք էր վիճել և խօսել նրանց գրութեան վերաբերութեամբ: Նամակները կարող են նոյն իսկ հնարված և շինու լինել:

Առհասարակ անանիւն Նամակներ գրելը մի տխուր երեւոյթ է մեր Կովկասի կենսութեան: Անանիւն Նամակ գրողները չեն կարողանում հասկանալ, որ ազգի բան չէ ասել ուրիշին անեն բան և ինչոյն ժամանակ հնարաւորութիւն չը տալ այդ ուրիշին, որ նա գիտենայ թէ ով է նրա հետ խօսողը, թէ ով պէտք է նա պատասխանէ, եթէ ցանկանայ հերքել մեղադրանքներ: Մի ընդհանուր սովորութիւն կայ անանիւն Նամակների վերաբերութեամբ, այդ այն է, որ նրանց վրա լուրջ ուշադրութիւն չեն դարձնում, նրանց համարում են չեղած, պատուում են և ոչ չնչացնում:

Բայց չը պէտք է մոռանալ, որ կան

այնպիսի ժամանակներ, երբ օդի մէջ յուզմունք է տիրում, երբ կ'անքի զստալուն շրջաններում սուր պատասխանատու ընդհարումներ են տեղի ունենում և որ մարդիկ, ոչքան էլ ստուստիտ լինեն, չ'են կարող մարտնչել չանցկացնել մի կասկած, թէ մի գուցէ անանիւն Նամակի ետեւ թաղանթը են իրական փոխանցներ:

Երբ որ մենք չը գիտենք, թէ ովքեր են նա Նամակ գրողները—մենք անկասկած, անկարող ենք նրանց վերաբերութեամբ մի որ և է խօսք ասել ըստ էութեան: Բայց մենք շատ ուրախ կը լինէինք, եթէ կարողանայինք հաստատ կերպով ասել, որ անանիւն Նամակներ գրողները հայեր չեն, որ հայերը իրանց ասելիքը կասէին ուղիղ կամ իրանց անձի կողմից կամ մի այնպիսի որոշ խմբի և հիմնարկութեան կողմից, որոնց հետ կարելի է որ և է ձևով յարաբերութեան մէջ մտնել, տեսնվել, խօսել, վիճել:

Սակայն, որպէս զի մենք կարող անանք ասել, թէ անանիւնները հայեր չեն, պէտք է մենք այդ համոզումը ունենանք իսկապէս: Եւ յամենայն դէպս մի բան մնում է ցանկանալ, որ մեր հասարակութեան մէջ ընդհանրանայ այն համոզումը, որ անանիւնների գոյութիւնը ցաւալի երեւոյթ է մեր կենսութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԲԱՐՈՒԹԻ ԱՂԵՏԻ ԶՈՂՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Վաղդիկավազից. գործակալ Յակոբ քան. Ստիկեանի ձեռքով հուշարձան Բագուի Մարգարիտական ընկերութեան ուղարկելու համար 500 ռ., 2) Դեպի քան. Ներքին Յովհաննիսեանի միջոցով հուշարձան 19 ռ. 80 կ. 3) Անտիվա գիւղից (Ս. խմբի շրջ.) հուշարձան Եւրոպական ձեռքով 160 ռ. Ընդհանուր գումարը նույնիսկ ստացանք իւր միասին 10,735 ռ. 35 կոպեկ:

ԲԱՐՈՒԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՅ ԶՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

(Շարունակութիւն)

121) Բախչի Աւետիսեան, շուշեցի, սպանված. 122) Ալեքսան Արքեան, վանք, Գեօկչայի գաւ., սպանված. 123) Յարութիւն Բաղդասար, նոյն գիւղից, ըսպանված. 124) Արշակ Մարտիրոսեան, Նորաշեն գ., Զանգեզուրի գաւ., սպանված. 125) Մաշադար Շահապարեան, սպանված. 126) Մարտիրոս Տէր-Յարութիւնեան, սպանված. 127) Ստեփան Մատուրեան Մատուրեան, Շուշեցի գ., Զանգեզ. գաւ., սպանված. 128—134) անյայտներ. 135) Սամսոն Յովհաննիսեան Պետրոսեան, Բոնակոթ գիւղ, Զանգեզուրի գաւ., 23 տ., սպանված. 136) Համո Մուրադբեկեան Վարդանեան, 40 տ., Մարզա գ., Զանգեզ. գաւ., սպանված. 137) Ստեփան Ստեփանեան, 60 տ., Տարսաղ գ., Շուշեցի գաւ., սպանված. 138) Միքայիլ Մաշադարեան Քառայեան, 18 տ., Զարգարեան գ., Շամախու գաւ., սպանված. 139) Աթա Միքայիլեան Դաւթեան, 60 տ., Զեյլ գիւղ, Զանգեզ. գաւ., սպանված. 140) Դաւթար Աւետիսեան Տէր-Մաշադարեան, 22 տ., սպանված. 141) Արքանա Յովհաննիսեան Բեյլայեան, 55 տ., սպանված. 142) Ներսէս Հայրապետեան Դաւթարեան, 42 տարեկան, շուշեցի սպանված. 143) Հայրապետ Գեորգեան Արքեան, Նախիջևան քաղաքից, 19 տարեկան, շուշեցի, սպանված. 145) Գրիգոր Առաքելեան Մարգարեան, 18 տ., Գեօկչայի գ., Շուշեցի գաւ., սպանված. 146) Թալիշ ազգանունը անյայտ, 10 տ., Դանակ գաւ., սպանված. 147) Մաշադար Յարութիւնեան թէոսեան, 30 տ., նույնիսկ, սպանված. 148) Ներսէս Յովհաննիսեան Դաւթարեան, 40 տ., Շուրաբլի գ., Գեօկչայի գաւ., սպանված. 149) Աւետիս Յարութեան Ռոստոմեան, 30 տ., Հերմէ գ., Դաւթարեան գաւ.,

սպանված. 150) Կոստանտին Յակոբեան Միսոնեան, 50 տ., քաղաքի, սպանված. 151) Մանուկ Արքեանեան Բաղդասարեան, 19 տ., Մանաձոր գ., Զեքրալի գաւ., սպանված. 152) Յովհաննէս Գրիգորեան Գրիգորեան, 28 տ., Կարճակ գ., վանքի վիլայէթ, սպանված:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԱՆԻՑ

Փետրվարի 22-ին

Ռուսաստանի ներքին կենսութեան տեղի ունեցած վերջին դէպքերն ու խառնակութիւնները ընդհանրապէս, Բագուի սարսափելի աղէտն ու զանազան մութ մարդկանց տարածած լուրերն ու բաց թողած թուեցիկները, որոնցով զրգուռւմ էին ռուս խաւարածիս ամբոխին հայ, լեւ և հրէայ ժողովրդի դէմ իբրեւ իրանց դժբաղդութեան միակ պատճառի՝ Նոր-Նախիջևանի և Բոստովի հայերին մի տեսակ պատերազմական-սպասողական դրութեան մէջ էին դրել այն աստիճան, որ վերջին օրերը (17—22) նրանք համարեա զաւղված էին մի-միայն իրանց դրութեամբ: Շատերը թողին թաղարը և հեռացան աւելի ապահով տեղ, ու մանր ունեցածները տեղաւորեցին ըսնկերում, իսկ բոլորը համարեա մի քանի օրվայ պաշար պատրաստեցին և միայն երեմիս երբեմն ան ուղղով դուրս էին գալիս տնից: Իւրաքանչիւրն աշխատել էր մի կերպ պահպանութեան միջոցներ ձեռք բերել, առանց նայելու էփանին ու թանգին, նոյն իսկ իր նիւթական միջոցներէ բարձր:

Նախապատրաստական ժողովում հայերը մի քանի աշխարհական և երկու հոգեւորական պատգամաւորներ ընտրեցին պատուաւոր անանիւնի և ուղարկեցին քաղաքագետի մօտ լինողներ, որ նախօրը հոգացվի սպանվիք անկարգութիւնների առաջ առնելու, որպէս զի ապագայում Բագուի նախագահները նման ուժերի պակասութիւնը պատճառ չը բերվի: Պատգամաւորներ էին զնայել նաև հրէաներից և Բոստովի քաղաքային ինքնավարութեան կողմից: Բաղաժապետը իրան գիտողներին ապահովեց իր, որ ամեն միջոց գործ կը դնէ և ժողովրդի խաղաղութիւնը կապահովվի: Բացի տեղում գտնված ոստիկաններից ու զօրքերից, մի քանի հարիւր զինուորներ, նոյն իսկ թիւաւորներ բերել էին Նոփոչեկասից և նրանք շարունակ շրջում էին փողոցներում և սաստիկ ծեծի տակ հեռացնում խմբված ամբոխին:

Որպէս զի սխալ չը հասկացվի և թիւրիմացութիւնների տեղիք չը լինի, պարտք եմ համարում յայտնել, որ ժողովուրդը երբէք չէր վախենում գործադուլ արած բանւորներից. երկու կայ անգործ հայ բեցողների (ՅՕՏԱԿԵ) անգիրն բաղժութիւնից, որոնք լինել են Բոստովի փողոցներում և որոնք կարող էին գործադուլի ժամանակ օգտվել հանգամանքից և ներգանքի ժողովրդին: Այս մասին պարզապէս մատուցել էին իրան քաղաքագետին և նոյն իսկ աւելորդ չէին համարել նկատել, որ եթէ զօրքի ոյժը բիշ է՝ իրաւունք տրվի իրանց զինվել և անհեր պաշտպանել:

Շարքի կառավարութեան ձեռք առած միջոցների՝ բանւորական գործադուլը իր նըպատակներին չը հասաւ և ընդհանուր գործադուլ անել չը կարողացան, թէ և շատ գործաւորներ, մանաւանդ տալարանները չեն աշխատում, այնպէս որ մենք տեղական լրագրիչներ ու հեռագրիչներ չունենք վերջին չորս հինգ օրերում: Մտաւայ թաղաքներից և մայրաքաղաքներից ստացած լրագրիչներն ու հեռագրիչները ծախում են սաստիկ թանգ գներով:

Հ. Նորատեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Մօսկվա, փետրվարի 27-ին (Հեռագրով)

Վերջին հեռագրերը մեզ բերեց սիրտ կտրատող լուրեր մեր թանգագին հայրենիքից: Մենք, Կովկասեան ազգութիւններն ու ներքինները

կ'սպասեցէին, իւրապէս յուզված այն տիւնալի դրամայից, որ տեղի ունեցաւ Բագուում, պարզապէս հասկանալով կատարված իսկական պատճառը, յայտնում ենք մեր տախլութիւնը այն մութ ուժերին, որոնք աշխատում են տարածել եղբայրասպան խառնակութեան սերմերը: Մենք համոզված ենք, որ Բագուի կոտորածը կը լինի առաջին և վերջին խաղաղակութեան ընդ Վովկասի պատմութեան էջերում: Եւ թող հոգիս անմեղ արիւնը ամբացնէ կովկասեան ազգութիւնների եղբայրական համերաշխութիւնը: Այդ համերաշխութեամբ զբօղալի տակ առաջ ընթանանք: Մի խումբ ռուս, վրացի, հայ, թուրք, օս և կովկասեան այլ ազգութիւններն ու սանոցներն և ուսանողներն:

II

Մօսկվա, փետրվարի 27-ին

Այսօր հասարակութեան արտակարգ բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարեցին վրաց և հայ հոգեւորականութիւնները Բագուի կոտորածների զոհերի համար: Թէ վրացիներ և թէ հայեր բազմաթիւ զգացված ճառեր արտասանեցին, որոնց նիւթն էր Կովկասի ազգերի եղբայրութիւնը և միութիւնը:

Նօսիճէ, Ենիկօլայեանց

III

Մօսկվա, փետրվարի 21-ին

Ստացանք զգացված Բագուի անօրինակ և վայրագ կոտորածի պատկերներ, որոնք լրջա տեսան «Մշակի» էջերում, ուղարկւում եմ 25 ռ. ի նպատակ ֆուսկածների ընտանիքներին, հաստատ հաւատարմով, որ այսպիսի մի խիստ ցաւալի և նոյն իսկ կովկասեան եղբայրական ազգերի բարձր շահերի համար վերին աստիճանի կորստաբեր դէպքը երբէք այլ ևս կրկնվիլու չէ:

Պրօֆ. Գր. Մալախեանց

IV

Վաղդիկավազ, փետրվարի 23-ին

Բագուի ստակալի աղէտը ցնցեց նաև այստեղի հայութեանը: Բացի հայերի և մանահազականների միացած շանքերից, յարգելի տիկիներ Բ. Տէր Արքանաւան, Մ. Կիրակոսեան, Կ. Ղաւաւմեան, Մ. Մալախեան, Շ. Թաթուրեան, Ա. Զաքարեան, Մ. Ղազարեան, Վ. Բախչիլեան, Գ. Տէր-Առաքելաւորեան, և Ե. Յարութիւնեան խմբերի բաժանված կանանց շրջանում ժողովեցին 682 ռ. 35 կ., որից 500 ռ. ուղարկվում է յարգելի խմբագրութեանը հասցնելու Բագուի Հայոց Մարգարիտական ընկերութեանը աղէտից ֆուսկվածների համար, 99 ռ. այստեղ բաժանվեց տեղիս ապաւինածներին՝ ոմանց ապրելու, ոմանց կրկին իրանց տեղերը դառնալու համար, 30 կ. փոխարութեան ծախս եղաւ, իսկ ֆուսկած 91 ռ. 15 կ. պահվեց առայժմ ապրողների պէտքերի համար:

Թող յարգելի տիկիներն մարդասէր վարձուքը գտնէ մասամբ թիթեացի տղիտութեան և ինտրիգների թշուառ զոհերի ծանր վիշտը:

Գործաւ ալ Յ. ք. Ստեփանեան

V

Արմաւիր, փետրվարի 21-ին

Կիրակի, փետրվարի 20-ին, երկնք խուռն բաղժութեան առաջ Արմաւիրի ամբողջ հոգեւորականութեան ձեռքով Առաքելաւորեան մայր եկեղեցում կատարվեց հանգիստաւոր հոգեհանգիստ ի յիշատակ անմեղ զոհերի, որ ընկան Բագուում չարանեղ մարդկանց ստեղծած աղէտի ժամանակ:

Գործակալ քանանայ Թէլեանը և հայր Սէֆիւրեանը հայերէն և չերեքերէն քարոզներ արտասանեցին, հրաւիրելով հասարակութիւնը դէպի եղբայրական սէր հարեան ազգութիւնների վերաբերմամբ: Քարոզները խոր ազաւորութիւն թողեցին իրանց չեքմութեամբ ու անկեղծութեամբ ժողովրդի տրամադրութիւնը բարձր էր: Ամենքի աչքերում կարելի էր կարգաւ հետեւալը. «Թող կորչէ թշնամին, թող տրեք եղբայրները ծախվեն»:

Վհափառ Կաթողիկոսին ժողովրդի կողմից ուղարկվեց հեռագիր:

Հէնց եկեղեցու մէջ ա. պատարագի ժամանակ հանգանակվեց մի փոքր գումար երկու հարիւր վեց ռուբլի քանաւան և հինգ կօպ. (206 ռ. 45 կ.), որ ուղարկվում եմ խմբագրութեանը Վհափառ Կաթողիկոսի հրամանով կազմակերպված յանձնաժողովի գանձապահ Կ. Մէլիք Ազարեանցին յանձնելու համար:

Աւելացնում եմ ընդ մինչ, որ Արմաւիրի հասարակութեան կողմից ընտրված է մի խումբ, բաղկացած քանաններից—Թէլեան Սէֆիւրեան—և մի աշխարհականից—Երզնկալ

հաւատարմատար Զաւար-բէկ Բալուղեանից: Այդ խումբը իսկոյն պէտք է ժողովարարութիւն սկսէ դրսուել նոյն նպատակով: Ուստի թէ Արմաշիւում ընակվող հայերը, և թէ շրջակայքում գտնվողները կարող են իրանց լուծան յանձնել յիշեալ մարդկանց:

Զաւար-բէկ Բալուղեան

ՆՈՐՔԻՆ ԼՈՒԻՐՈՐ

Փետրվարի 18-ին երգուեալ հաւատարմատար Գր. Զալուղեանը մի ընդարձակ յայտարարութիւն է տուել Նոր-Նախիջվանի քաղաքային խորհրդին, որի ձայնաւոր է ինքը, և առաջարկել է. ա) Ուստի կանգնած յարգել Բագուի հայ և ժամհայական գոհերի յիշատակը: Բ) Յայտնել Բագուի քաղաքագլխին Նախիջվանի դուռայի կողմից համակրանք և վերտակցութիւն քաղաքին հասած այդ զգուշի աղէտի պատճառով՝ անկեղծ և հաստատ ցանկութիւն արտայայտելով, որ լինի հրապարակական դատաստան և պարզի այդ հսկայական ոճիրի պատճառը, գտնվին նրան գրգռող գարշիլի անձներ և պատժվեն: Գ) Բաղաժային միջոցներով 2000 ռուբլի յատկացնել Բագուում անտէր-անտիրական մնացած հող և թուրք ընտանիքներին օգտին:

Փետրվարի 24 ին Բագուի թերթերի խմբագիրներին հրաւիրել էր գնեալու-նահանգապետ գնեալու Ամիրալարին և դարձնել նրանց ուղարկութիւնը խաղաղութիւնն ամրապնդելու և հաշտութիւնը կատարեալ դարձնելու անհրաժեշտութեան վրա:

Փետրվարի 26 ին Թիֆլիսի ժողովարանում կայացաւ յօգուտ էֆանագին ճաշարանի կօնցէրտ, իսկ վերջումը դիմակահանդէս: Մուտքը 1800 ռուբլով աւել է, որից 20 տոկոսը նշանակված է Բագուի ֆուսսմաների օգտին:

Թիֆլիսի քաղաքային առաջին ապաստարանի կառավարչի հաշիւից երեւում է, որ յունվար ամսի ընթացքում ապաստարանում գիշերել են 4125 հոգի, որոնցից 3994 եղել են տղամարդիկ, իսկ 131-ը կանայք: Ըստ ազգութեան՝ ռուսներ եղել են 2403 տղամարդ և 69 կին, հայեր՝ 869 տղ. 31 կին, վրացիներ՝ 445 տղ. և 31 կին, թուրքեր՝ 54 տղ., գերմանացիք՝ 30 տղ., լեհեր՝ 115 տղ. և զանազան ազգութիւններ՝ 78 տղ.: Ամենից շատ յաճախել են մշակներ՝ 2111 հոգի, ծառաներ 480, գործելու անընդունակներ 434 և այլն: Ապաստարանում գիշերել են և 2 աշակերտ:

Մեկ խնդրում են յայտնել, որ վաղը, չորեքշաբթի, մարտի 2-ին, տեղի կունենայ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը, որտեղ Ա. Բալուղեանը կը կարգադրէ զեկուցումը Սև ծովի ափերի ծխախոտագործութեան մասին: Նիստին կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք:

Փետրվարի 16-ից մինչև 23-ը, ասում է «Բաւի» լրագրից, Բագուից հեռացել են 7,500 ըմբուր թէ Վրացիկականի և թէ Անգլիկական երկու խմբերով:

Վ. Ի. Կովալովսկու նախագահութեամբ Պետերբուրգի Կայսերական Տնխիական ընկերութեան մէջ ընկնում է բաւարարական հարցը: Գնահատութիւնը կատարվելու են խմբակներով՝ տնտեսական, իրաւական, քաղաքական, ժողովրդական լուսաւորութեան և այլ տեսակետից: Այդ խմբակներէ մէկի մէջ է մտել և Մասկովայի համալսարանի նախկին պրոֆեսոր Ա. Ի. Զուպովը, որ յայտնի է իր քաղաքատնտեսութեան դասագրքերով և համակրելի ուղղութիւնով:

Օգուրդէթից հեռագրում են «Տ. Ա.» լրագրին փետրվարի 26 ից. «Փետրվարի 24 ին Ն. Ա. Սուլթան-Կրիմ Գիրլը Նիդերլանդի գիւղում էր, իսկ 25 ին՝ Անկանցում: Այժմ, հասարակական չորս ժողովներից յետոյ՝ գիւղացիների ցանկութիւնները որոշվեցին բաւական լրիւ կերպով: Այդ պահանջներից վերաւորներն են. 1) ժամանակաւորապէս պարտական գիւղացիներին ազատել հաստատելով նրանց վրա իրանց հողաբաժիններն առանց վճարման. 2) բարձրագոյն և միջին կրթութեան հանրամատչելիութիւնը և տարրական ընդհանուր և պարտադիր կրթութիւն. 3) խօսքի, ժամուկի և ժողովների ազատութիւն. 4) տեղական ընդհանուր ինքնակառուութիւն. 5) հողային բնէտայի կանոնաւորում. 6) անուղ-

ղակի հարկերի վերացում և ներմուծում եկամտային հարկի. 7) տալ եկեղեցական կալուածները գիւղացիներին իր սեփականութիւն. 8) ընտրվին դատաւորներ. 9) ժողովրդական պատգամաւորներին մասնակցութիւն օրէնսդրութեան մէջ: Դաւաւում ամեն ինչ խաղաղ է: Բացարձակ բացակայում են պառակտիչ ձգտումներ:

«Ճնօրին Փուրցէլի» լրագրին գրում են Գուրիայից, որ Շէֆերմէի գիւղում փետրվարի 13-ին (նրանից յետոյ, երբ Գրիմ Գիրլը այնտեղ էր) գիշերը տեղական ագուական Անտոն Դուրաձէի տան վրա, տանտէրի բացակայութեան ժամանակ, մէկ մարդ յարձակում գործեց, և մի քանի տեղ ծակեցին տունը բեմով: Գիւղացիները ընկեցին յարձակվողին, որը յայտնվեց, որ Դուրաձէի ծառան է: Մահուան խոստովանեց, որ այսպէս վարվեմ, որպէս զի ինքն առիթ ունենայ գանգատելու գիւղացիներին դէմ, թէ նրանք այսպէս յարձակումներ են գործում և անհանգիստ են անում իշխան-ազնուականներին: Գիւղացիները իսկոյն և եթ արձանագրութիւն կազմել տուին գիւղացիներին, տարան տանուակէրին և ծառային ու գնացին Կրիմ-Գիրլի մօտ ամեն ինչը նրան յայտնելու համար:

Գորու գաւառի Փոյղ գիւղից հաղորդում են «Ճնօր. Փուրցէլի» լրագրին, որ փետրվարի 24 ին հրդեհել են իշխան Դաւիթ Բագրատիձե-Դաւիթաշիլիի տունը: Ամեն միջոց գործը զրկել, սակայն կրակը չը կարողացան հանգցնել, և տունը ամբողջապէս այրվեց: Որպէս լուր է պտուտ, հրդեհի պատճառը հետեւեալ հանգամանքն են համարում. իշխանը, որը այժմ Պետերբուրգում է, իր կալուածքում անտառի վերակացու է նշանակել մի չէչէնի: Այդ չէչէնը չափազանց նեղացնում և տանջում էր գիւղացիներին: Այս դրանից և մի քանի այլ պատճառներից առաջացել է թշնամութիւն տեղական մի քանի գիւղացիների և իշխանի միջև: Տան մէջ այրվել է նաև հինգ հարկեր բուրբի փող: Ասում են, որ ֆուսսը 50,000 ռուբլու է հասնում:

Նոյն լրագրի ասելով, փետրվարի 23 ին Գուրիայում գործադուր արեցին լուսանկարչներին աշակերտները: Նրանք պահանջում են. 1) օրական 8 ժամվայ աշխատանք, 2) ուժիկներին աւելացնել մեծ ծառայողներին, 3) աշակերտներին հէնց ընդունելու ժամանակ նշանակել ամսական 2 ռ. 50 կպէկ (այդ փողը հարկաւոր է նրանց շորերի, բաղանիքի և մազերը կտրելու համար). իսկ երկու տարուց յետոյ, երբ աշակերտները աշխատել կը կարողանան, պէտք է ստանան ամսական 5 ռուբլի: Բացի դրանից պէտք է ազատ լինեն կրակի օրերը:

«Прав. Вѣст.» լրագրում տպված է Կուրսկ քաղաքի միջնակարգ դպրոցների ասաների արած ցույցերի մանրամասն պաշտօնական նկարագրութիւնը և ուստիկանութեան ձեռք առած միջոցներն այդ ցույցերին վերջ գնելու նպատակով: Դա այն ցույցերն են, որոնց զսպման ժամանակ ուստիկանութեան և կազմակերպիչ գործադրած միջոցներն նկարագրութիւնները «Р. Вѣст.» լրագրում մարդու մազերը բիզ բիզ են կանգնեցնում:

«Р. Лист.» լրագիրը հաղորդում է, որ ենթադրութիւն կայ արձակել Պետերբուրգի համալսարանի բոլոր ուսանողներին, որոնք յանցաւոր են հանդիսանում՝ մասնակցած լինելով փետրվարի 7-ի ընդհանուր ուսանողական ժողովին:

Շաթոյ և Զաքաթալա քաղաքների ամբողջութիւնները գնդաւորական վարչութեան տուած հրամանով այստեղից պէտք է ոչնչացված համարվեն: Այդ որոշումը Բարձրագոյն հաստատութիւն արգէն գտել է: (Пр. Вѣст.)

Զաքաթալայից հեռագրում են «Տ. Ա.» լրագրին, որ փետրվարի 25-ին, ցերեկը՝ անյայտ մարդիկ սպանել են տեղական հանքերի պրիստաւի քարտուղարին և երկու ստրաժնիկներին:

«Մշակի» № 31-ում տպված նուէրների շարքում տպված է, որ Բաթումից ստացվել է 25 ռուբլի, հաւաքված Մ. Միհրանեանի ձեռքով: Այդ գումարը պ. Միհրանեանը չէ հաւաքել, այլ ինքն է նուէրել և ուղարկել իր սեփական լուծան:

«Մշակի» № 24-ում տպված 19 ռ. 80 է. նուէրը, որ հաւաքված է մի խումբ արհեստաւորների և բանտարներին մէջ Ալեք. Կուրալեանի ձեռով, սխալմամբ խառնվել է «Մշակի» № 33 ի ներքին լուրերի մէջ երկաթուղու գէպօի բանտարների մէջ հանգանակված նոյնպիսի, այն է 19 ռ. 80 է. գումարի հետ: Ուղղում ենք այդ սխալը, յայտնելով, որ այդ գումարները առաւ ձին են:

Ալեքսանդրովից մեզ գրում են. «Փետրվարի 24 ին գերաւան Խաթալը, մասնակցելով իր քանակը գերաւան Արմենիանի և տեղից սիրողների, ժողովրդական տան դարձնում Վարդանանց տնի առիթով մատչելի գներով ներկայացրեց «Արշակ II» պատմական դրամա 5 գործողութեամբ, հեղ. Գալֆայեանի: Դահլիճը ծայրէ ի ծայր լինէ էր ընտրել հասարակութեամբ: Խաղի ընդհանուր տպաւորութիւնը վատ էր, գերակատարների տաղանկալի արտասանութիւնները թմրեցրին հասարակութիւնը, որը հեռացաւ դժգոհ կերպով:

Թեւթիւն մեզ գրում են. «Փետրվարի 20-ին տեղից վրաց աղբարանութեան խնդրելով Թեւթի հայոց մայր եկեղեցու գաւթում, պատարագից յետոյ, կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ Բագուի անմեղ նահատակների յիշատակին: Պատարագից յետոյ Թեւթի ամբողջ հոգեւորականութիւնը շարական երգելով դիմեց դէպի գաւթ, ուր դրած էր զարդարած դիմակը և նրան կից ամբիոնը: Մասնակցում էր և վրաց հոգեւորականութիւնը: Ընդարձակ գաւթում տեղ գցելու տեղ չը կար: Չափազանցութիւն չի լինել, եթէ նրանց թիւը հաշւենք 5000: Թէև ուստիկանութիւնը բացակայում էր, կարգապահութիւնը օրինակելի էր: Ժողովուրդը կրում էր սուգի և տրտմութեան կերպարան: Հոգեհանգիստից յետոյ կարգացուց թիմական առաջնորդի առաջադրութիւնը ժողովարարութեան առիթով: Խօսեցին գործակալը, Արէշ քանանան, Հալի Մանուկեանցը, Ի. Զարաի-շիլի և մի իշխանուհի: Երբ Զարաի-շիլիին վերջացրեց իր ճառը՝ օղբ թողաց, կեցցէններով և անվերջանալի ծափահարութեամբ: Այդ տեղից բազմութիւնը գիմեց դէպի վրաց եկեղեցին, որի գաւթում վրաց հոգեւորականութիւնը հոգեհանգիստ կատարեց: Հասարակութեան ցանկութեամբ կազմվեց մի համակրաւորական հեռագիր պ. Ս. Վերմիլեանի անունով: Ժամի 2½-ին վերջացաւ հանդէսը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԱՐԱՅՄ ԵՈՐԻՃԸ

Ներքին դուրսիւր Եւրոպայում: Տօկիոյց հաղորդում են «Times» լրագրին, որ մարկիւ Մայոնշի, առաջադրմանականների կուսակցութեան պարագլուխը, կողմից իր տանը մի բանկէտ, որին ներկայ էին «աւագներ», մի նիստերը և երկու գլխաւոր քաղաքական կուսակցութիւնների շատ ազդեցիկ անդամներ:

Այդ բանկէտին մարկիւ մի ճառ արտասանեց, որի մէջ շնորհակտեց երկիրը կառավարութեան և կուսակցութիւններին մէջ տիրող լիակատար միաբանութեան համար, որ թոյլ տուեց նշանաւոր կերպով աւելացնել հարկերը, տուանց տրտմել յարուցանելու ժողովրդի մէջ Մարկիւ համոզված է, որ միաբանութեան այդ ոգին կօդնէ ազգին յաղթել բոլոր խոչընդոտներին, որոնք կարող են ծագել պատերազմի ապագայ ընթացքում:

Իրաւիւրը Հեռաւոր Արեւելում: Յայտնի գիտնականի պատերազմական քննադատ գրնդագիտ Գետկէ, խօսելով այն տարածաշրջանների մասին, որոնք ծագեցին Մանչուրիայի առաջ քանակի ընդհանուր հրամանատար գնեալու Կուրապատիկին և հրամանատար գնեալու Գիւղայեանի մէջ, ասում է, թէ գնեալու Կուրապատիկին մեծաւոր աշխատակիցները մեղադրում են նրան անաշուղտութիւնների մէջ, մինչ ընդհանուր հրամանատարը, իր կողմից, առաւական գնեալուներին է վերագրում գործողութիւնների անաշուղտութիւնը, առաջ Զատուրի և Զառաիկերի գնեալուներին, իսկ այժմ Գիւղայեանի մէջ և նոյն իսկ արևել և զօրքի սրբելի Լինեվիլին: Վերջինս մեղադրվում է նախաձեռնութեան պակասութեան մէջ, մինչ Լինեվիլը այդ նախաձեռնութիւնը չափազանց ցոյց տուեց: Այն դրութիւնը, որի մէջ գտնվում է այժմ առաջ քանակը, այն է անմիջական շփումը թշնամու հետ՝ այդ դրութիւնը ստիպում է, որ նախաձեռնութիւնը բլիւն միայն ընդհանուր հրամանատարից:

Գալով Գիւղայեանի մէջ, գնդապետ Գետկէ ասում է, որ նա պարտազանցութիւն է արել կարգապահութեան դէմ: Ոչ մի երկրում հնարաւոր չէր մեկնել պատերազմական գործողութիւնների դաշտից, հիւանդութեան պատրուակով և, ընդունելով թիթակիցներին, դատաւարտել նրանց, առաջ իր հրամանատարին:

Իբրեւ կարգապետ, գնդապետ Գետկէ ենթադրում է, որ առաջ քանակի ներկայ դրութեան մէջ, միայն շատ եռանդուն հրամանատարը կարող էր շտկել գործը և օրինաւոր յարգ է ընծայում գնեալու: Կուրապատիկին անխնայ հոգեւորականութեան քանակի մասին: (Ռ.)

Եւրոպայից: Եւրոպայից քաղաքի երեւում: Նորիս հեռագրից յայտնեց, որ եւրոպական հեծելազորքը փչացրել է երկաթուղին. այդ տեղը, ինչպէս հաղորդում է «Morning Post»-ի թիթակիցը, գտնվում է աւելի դէպի հիւսիս, քան առաջ ենթադրում էին: Այդ տեղը հէնց 10-12-նի ետեւ է. ուրեմն, եւրոպացիները գտնվում են 30-40-նի դէպի հիւսիս Մուրգէնից և 25-40-նի դէպի հարաւ Տէլինից: Դեռ յայտնի չէ այդտեղ հասած եւրոպական զորքերի թիւը, բայց վերջին գեկուցումները ստիպում են ենթադրել, որ այդտեղ կային ոչ պակաս քան վեց հազարանոց եւրոպական հեծելազորք, չորս գունդ հետակ և մօտ 2000 խուճուկ:

Եւրոպական նշանաւոր ոյժերի յանկարծակի երեւումը առաջ քանակի թիթակիցում՝ ստեղծել է, հաւանքեւ, նոր դրութիւն առաջ, գլխաւոր հրամանատարի համար և կարող է ստիպել նրան փոխել իր պլանները: (Ռ.)

Ռուսաց զորքի քիւր: «Daily Telegraph» լրագրի թիթակիցը Տօկիոյց հեռագրում է, փետրվարի 19-ից, որ եւրոպացիների հաշով, Կուրապատիկին բանակը իր թիւը երկու անգամ աւելի է այն թւանշանից, որ որոշել են այդտեղ գտնվող եւրոպացիները: Եւրոպական զեկուցումները համաձայն, ռուսները ունեն 339,000 մարդ հետակ և 35-340 արտակրկիտ: Ընդամենը նրանք տրամադրում են, հաշուելով և երկաթուղիների պահապան զօրքը, 700,000 մարդ և 180,000 ձի: Մասուցը խուճուկի վրա վերջնականապէս հաշվել է: Մէյ-կախուն գրաւուց, յետոյ եւրոպական աշխատակի մի զօրի զօրախումբ ուղղվեց դէպի հիւսիս, ուր տեղի ունեցան կատաղի կռիւներ: Եւրոպացիները մի շարք յարձակումներ գործեցին և կուտում էին քաղաքը, բայց կրեցին մեծ կորուստներ: Գնդապետ Սիմս-ցան սպանված է, գնդապետ Կապալին թիթակի վիրաւորված է, 20 օֆիցէր և 500 զինուոր կամ սպանված են կամ վիրաւորված: Ռուսները, 30,000 մարդի ոյժով, նահանջեցին, իսկ եւրոպացիները միացան իւրաքանչիւրի հետ: Հաղորդում են, որ 10,000 ռուսներ գտնվում են Լեւոտանի մօտ, Սինմիստինից 25 մղոն հեռու: 200 ռուս գերիներ Օսակում փորձեցին փախչել, զբաղված մի ֆելդֆերից, բայց եւրոպական պահակը յայտնաբերեց դաւադրութիւնը: (P. A.)

Ինչ է պիսի Ռուսաստանի Հեռաւոր Արեւելում: «Temps» լրագրի Պետերբուրգի թիթակիցը առաջ է բերում մի շատ հետաքրքիր գեկուցագիր բովանդակութիւնը, որ կազմել է մի հեղինակութեամբ անձն Հեռաւոր Արեւելում: Ռուսաստանի ունեցած շահերի և գործերի գրութեան մասին: Այդ գեկուցագիրը հեղինակը գտնում է հինգ հարց և ամեն մի հարցին պատասխանում է խիստ համոզված և՛—բացասաբար. 1) Գլխաւոր արգելք Ռուսաստանին իրաւաւ ունեցնում էին մի ուրիշ նաւասանագիտ, բայց Վալադիստովից: 2) Կարող է արգելք Ռուսաստանը, լինելով նախամիջապէս ցամաքային պետութիւն, գտնաւ մի և նոյն ժամանակ և ծովային պետութիւն: 3) Մտնում է արգելք Մանչուրիան առաջ ազգեցութեան շրջանի մէջ Հեռաւոր Արեւելում: 4) Մանչուրիայի տիրապետութիւնը արգելք կարող է հարստացնել Ռուսաստանին և մեծացնել նրա ոյժերը: 5) Շահագրգռված է Ռուսաստանը այն բանի մէջ, որ արգելէ Եւրոպային հաստատվել ցամաքի վրա:

Այդ բոլոր հարցերին պատասխանում է բացասաբար և գտնում է, որ Ռուսաստանի համար «անհրաժեշտութիւն» չը կայ ծովային պետութիւն դառնալու: Նախ և առաջ Ռուսաստանը «առաւորական նաւատորմ» չունի, նա ունի պատերազմական նաւատորմ, բայց եւրոպացիները և նրանց հաւաքուրդ գաղաւկիցները ապագայ պատերազմի մէջ, այն է անգլիացիները, գուցէ և ամերիկացիները, կարող են մի քանի անգամ ոչնչացնել նրան: (Hob.)

Եւրոպական գործող բանակի կազմը: «Köln. Zeitung» լրագրի տեղեկութիւններով, մարտի 1 Օրիման հաւաքել է ներկայումս պատերազմ-

մական գործողութիւնները դադարեցնելու մասին որոշում կայացրեցին: Այդ հաշուով հապօնական բանակի ընդհանուր թիւը Մանչուրիայում կարելի է ընդունել 275,000 մարդ և 936 թնդանօթ. այդ հաշիւ մէջ չեն մտնում Պորտ-Արտուրից բերած ծանր արտիլերիան և պաշարողական թնդանօթները: (ԲՄԵՆ):

ՆԱԾԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, մարտի 4 ին (ն. տ.)

Փետրվար ամսի 19 ին այցելելով Բերլինի նկարչական ընկերութեան ցուցահանդէսը, գեղարուեստական պալատին մէջ, ի միջի այլ նկարներէ՝ աչքի էին ընկնում մեր յայտնի հայ նկարիչ պ. Վարդան Մախոխանի ցուցադրած երեք նկարները: 1) Երեկոյ անտառում, (մեծադիր նկար), 2) Ձմեռային երեկոյ, 3) Լուսինը խաղաղ ծովի վրա:

Տեղական թերթերում մի քանի անգամ առիթ եւ ունեցել կարգադրու յայտնի ընտանեկան ներքին գովասանական գրութիւնները պ. Մախոխանի գործերի մասին, ինչպէս՝ օրինակ, անցեալ տարի կայսերական գեղարուեստական պալատում տարեկան ցուցահանդէսում ի ցոյց դրված նկարների համար՝ տեղական ամենակարեւոր «Berliner Tageblatt» լրագրի յայտնի ընտանեկան ժրտոց Շտալ մեծ գովասանքով յիշում էր մեր հայրենակցի անունը:

Միայն մի տարի առաջ պ. Մախոխանը մասնակցելով երիտասարդ նկարիչների կոնկուրսին, գործող անդամ ընտրվեց Բերլինի գեղարուեստական ընկերութեան. այդ ընկերութեան անդամներին է ընտրվում տարեկան և համաշխարհային ցուցահանդէսներին ընտրող և ընդունող խորհուրդը (jury): Այս ընկերութեան անդամներն են Գերմանիայի ամենամեծ նկարիչները, ինչպէս, օրինակ՝ անցեալ ամսին վախճանված աշխարհածանօթ պրոֆէսոր Ա. Ֆան Մէնցել, որի թաղման առիթով ազգային գալէրի կոչված թանգարանում (National Gallerie) շքեղ հանդէսներ տեղի ունեցան ֆրիդրիկական տարազներով, որովհետեւ հանգուցեալ նկարիչը՝ գերմանական կայսր Ֆրիդրիխ մեծի անունը աննման կենդանի նկարներով անմահացրած է: Մէնցելի թաղման ներկայ էր Վերլինի կայսրը, որը նոյն իսկ բաւական տեղ ունի հետեւեց դադարին. ներկայ էին նոյնպէս կայսրուհին, գերմանական և օտար տերութիւնների ներկայացուցիչներն և ամեն կողմերից ուղարկված գեղարուեստական և գիտական ծանօթ անձնատուրութիւններ: Հանդէսին կարելի էր ներկայ գտնվել միմիայն մի քանի րոպէս, իսկ այլոց համար մուտքը արգելված էր ուստի կանոնաւոր կողմից:

Արդեօք միթէ ուրախալի չէ, երբ մի հայ նկարիչ ևս հրաւիրաթուղթ ստանայ ներկայ գտնվելու նմանօրինակ պաշտօնական և փառաւոր հանդէսի, որի մուտքը բերլինցի դիրք ունեցող շատ անձնատուրութիւնների առաջ փակ կը մնար: Այդ հանդէսին ևս ներկայ էր պ. Մախոխանը:

Պ. Մախոխանը արդէն մի քանի անգամ մեծ աջողութեամբ ցուցահանդէսներ սարքած է եգիպտոսի Ալեքսանդրիա և Գահիլէ բաղնիքներում, որտեղ տարեկան մի քանի անգամ ցուցահանդէսներ են բացում թէ տեղական ֆրանսիացի, իտալացի և հայ նկարիչները և թէ Եւրոպայից եկած անցորդ նկարիչները: Պ. Մախոխանը անցեալ տարի վերդիլիալ բաղնիքներում տեղական նկարիչների ցուցահանդէսին կից բացել էր իր գործերի ցուցահանդէս, որով շատերի ուշադրութիւնը գրաւած է իր աշուղ նկարներով:

Երկուստարդ նկարիչը այս ամիս դարձեալ եգիպտոս պիտի ճանապարհորդէ՝ իր նոր գործերի ցուցահանդէս կազմելու. իսկ այլ ևս մտադիր էր Ռուսաստան և Գոլկան ցուցադրել, բայց իրանից անկախ պատճառներով յետաձգվեց ապագային:

Վստահ եմ ինչպէս Բերլինում, եգիպտոսում, նոյնպէս Ռուսաստանում ու Գոլկանում ևս ապագային աշողութիւն կունենայ իր նկարների բանաստեղծական բնատուրութեամբ և գոյնների այնչափ իրականութեամբ:

Ի սրտէ ցանկանում եմ մեր տաղանդաւոր նկարիչ պ. Վարդան Մախոխանին կատարեալ աշողութիւն:

Խ. Խոսրովեան

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

26 փետրվարի

ՊԱՐԻՉ, 26 փետրվարի: Պրեսանսէին պատասխանելով, Դէկլանէն պնդում է, որ Յրանսիան երբեք չէ գործութիւնը չէ խախտել ուսէնակադրայի օգտին և ապացուցանում է, որ Բոֆեստիլնակու էակադրան մնացել է Մադագասկարի ֆրանսական ջրերում միայն այնքան ժամանակ, որքան թոյլ է տուել չէ գործութիւնը: Բարձր շրջաններում Պրեսանսէի հարցապնդումը համարվում է անփափանկ, որովհետեւ էակադրայի մեծ մասն արդէն մեկնել է բաց ծով:

ԲՐԻՒՍՍԵԼ, 26 փետրվարի: Քարածուխի հանքերում գործադուլը վերջացաւ:

ԼՕՆԴՈՆ: Բուլգարական Ֆէրդինանդ իշխանը մեկնեց: Կոմս Բենկէնդօրֆը երկարատեւ խօսակցութիւն ունեցաւ Լանսդօռնի հետ արտաքին գործերի մինիստրութեան մէջ:

ՆԻՒԵՆՕՐԿ, 26 փետրվարի: Ռուզվիլտի կարծիքով՝ Միացեալ Նահանգների նաւատորմի ներկայ կազմը, հետը հաշուելով կառուցման ծրագրերն արդէն հաստատված նաւերը, նոյնպէս և այժմ շինվող նաւերը, բաւական մեծ է ներկայ բոլորի պահանջներին հետ համահասկումով:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, Պաշտօնական, գեներալ ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրը Նոյին Կայսերական Մեծութեան Անունով՝ փետրվարի 25 ից. «Բանակների նահանջը կատարվեց մեծ գիտաբանութիւններով և վտանգով. մասնաւորապէս ծանր էր այն կորպուսների դրութիւնը, որոնք ամենից աւելի հեռու էին Մանդարինեան ճանապարհից: Եւ պաշտօնների աշխատանքները զորամասերը ներս էին թափանցել Տալան գիւղի կողմում լինող վայրերը և արեւմտեան առաջ արշաւող զորամասերի հետ միասին սպանական դիրք ընդունեցին մեր զորքերի մի մասի վերաբերութեամբ: Մեր զորքերի գործ դրած ծայրայեղ ջանքերի շնորհով վտանգը հեռացվեց: Առաւօտեան ժամը 11-ից մինչև երեկոյան 5-ը թշնամին ուժեղացում էր մեր յետ նահանջելու ճանապարհները թէ արեւելքից և թէ արեւմուտքից. արեւելքից Մանդարինեան ճանապարհը ուժեղացում էր երկու տեղում՝ Տալան և Պուխ գիւղերի մօտերը: Այս ծանր օրում զորքերի շատ մասերը վարվում էին անձուիրաբար: Հարաւից հեղուկութեամբ պատուել անցնելը բացատրվում է նրանով, որ ինչպէս գիտեմ, որը մեր մուկէնեան դիրքի համար վտանգի պատճէջ էր, այժմ ստանում է: Այսօր վերադարձել է գեներալ Յերպիցկին, որ մինչև կուի վերջը մնաց շարքի մէջ: Վերադարձել մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»:

27 փետրվարի

ՏՈՒԿՈ, 25 փետրվարի: Այլ ևս կասկած չը կ'այ, որ եւպոնացիները յաղթել են: Եւպոնական ձախ թէն առաջ է արշաւել ոչ միայն Մուկէնը գրաւելու նպատակով, այլ որպէս զի գրաւեց քաղաքից հիւսիս-արեւելք եղած բարձրութիւնները: Այդ նպատակն իրականացնելով փետրվարի 22-ին, եւպոնացիներն անմիջապէս ոչնչացրին երկաթուղին, որ անցնում էր լեռնանցքի վրայով: Յուկէնը և Տէլի-նի միջև եղած երկաթուղին կտրել են եւպոնացիները: Եւպոնական հեծնաւորը գործում էր փայլուն կերպով, կատարելով մի շարք արագացած ընթացքներ, որոնց ժամանակ բռնեց սայլաւորներ, ոչնչացրեց երկաթուղին և պայթեցրեց լարած ֆուգասները: Եւպոնական ծայրագոյն ձախ թէն էլ մի փայլուն շարժական շարժում գործեց՝ գրաւելով Սախուայ-գին: Ռուսները նահանջում են Սուխեի ափերով, Մուկէնի և երկաթուղու միջև եղած տարածութեան ուղղութեամբ: Եւպոնացիները հաղածում են նրանց և ուժեղացնում անընդհատ: Եւպոնացիները հասել են Պուխ և փորձում են ոչնչացնել ուսական ուժերը: Տենցզինի շրջանում եւպոնական մի զորամաս յարձակում է գործում ուսական զերազանց ուժերի դէմ, որոնք բռնել են Յուկէնի հիւսիսի բարձրութիւնները: Շախէի շրջանում եւպոնացիները քշեցին ուսական Սուխեի աշխարհ և այժմ փորձում են նրանց շարժել, յարձակվելով Մուկէնի արեւելքից և հիւսիսից: Տերեկվայ ժամը 12 ից ուսական բազմաթիւ զորքեր, ուժապառ եղած, սկսեցին նահանջել դէպի հիւսիս: Եւպոնացիները մինչև ուշ գիշեր կենտրոնացրել էին իրանց կրակը նահանջող զորքերի վրա:

ՏՈՒԿՈ, 26 փետրվարի: Եւպոնական յաղ-

թանակների առաջին լուրերը վաղաժամ դուրս եկան: Գործողութիւնները դեռ վերջնական հետեանք չեն հասել: Ռուսական ձախ թէն արդէն սկսել էր նահանջել լոյս 22-ի գիշերը: Լեւնալթիաները թոյլ չեն տալիս եւպոնացիներին արագ առաջ շարժվելու: Կարծես թէ եւպոնական զորքի ճակատամարտ կանգ է առել Սուխեի վրա և միայն Օկուն է մտել Մուկէն: Նոգին հալածում է ուսներին հիւսիսային ուղղութեամբ, բայց կը հասնէ արդեօք նրանց, դա դեռ հարց է: Տէլինն ունի զօրեղ ամրութիւններ և թարմ զօրքեր:

ՄՕՍԿՎԱ, 26 փետրվարի: Գաւառներից հաւաքված քաղաքագիւղների խորհուրդն ընդգծեց մի շարք հարցեր, որ պէտք է ընկնէ քաղաքագիւղների առաջիկայ ընդհանուր ժողովում և յանձնեց Մոսկվայի դումայի յանձնաժողովին մշակելու խորհրդակցութեան ժամանակ յայտնված մարքերը: Բացի քաղաքային օրէնսդրութեան նախագծից, բիւրօն պէտք է ներկայացնէ հրդեհաշէջների մունիցիպալիզացիայի կամ քաղաքի պատկանելու և քաղաքային միլիցիա հիմնելու շախնդիր:

27 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒԳ, Հրաման գեներալական վարչութեանը: Ընդունելով, որ գինորական ծառայութեան մէջ գտնվողները խօսակցութիւնները լրագրիչների աշխատակիցների հետ անհամապատասխան են ծառայութեան շահերին և գինորական կարգապահութեան ոգուն, յիշեցնելով է, որ գինորական ծառայութեան մէջ գտնվողները անշեղ կերպով կատարեն և չը հաղորդեն, առանց պատշաճաւոր թոյլտուութեան, տեղեկութիւններ պարբերական մամուլի մէջ հրատարակելու համար:

ՊԱՐԻՉ, 23 փետրվարի: Արեւիսիայում և Ադես-Արշէղում հիմնվում է միջազգային բանկ 12 միլիոն ֆրանկ դրամադիւսով, որի կէսը եգիպտական բանկին է, քառորդը ֆրանսիական բանկներին և մի քառորդն էլ պատկանում է անգլիական բանկներին:

ՏՈՒԿՈ, 26 փետրվարի: Ռուս գերիներին թիւը հասնում է 20,000-ի: Տօկիոյում առանձին կենդանութիւն չէ նկատվում: Եւպոնացիները գրաւեցին նեղուղի երկաթուղու պարկը: Ռուսները ընդհանուր թիւը որոշում է 376 բաւալիօն, 176 բաւալիօն և 178 էակադրօն, բնդամներ 300,800 մարդ հետեակ, 26700 հեծնազօր և 1368 թնդանօթ:

ԼՕՆԴՈՆ: Լոնդոնի եւպոնական միսիոնար հաղորդում է, որ եւպոնական զորաբաժինը Մինդանի ուղղութեամբ, որը հալածում է ուսներին Յուկէնից դէպի հիւսիս, փետրվարի 24-ին հասաւ Միշուկու 5 մղոն դէպի հիւսիս Յուկէնից և շարունակում է հալածանքը:

ՄՕՍԿՎԱ: Հերբելում է արդարադատութեան և հասարակական աշխատանքների մինիստրների հրաժարական տալու լուրը:

ԲԵՐԼԻՆ: Գերմանական զօրքերի գլխաւոր հրամանատար գեներալ Տրոտա հարաւարեւմտեան Աֆրիկայում ցանկութիւն յայտնեց յետ կանչվել Աֆրիկայից:

ՎԻԵՆՆԱ: Գաղանդ ապրօսական թագաւորը կայցելեց Յրանց Յովսէփ կայսրին:

ՄԱՐՍԷԼ: Աւստրալիայից եկաւ «Բիւտա-նիա» շոգենաւը: Շոգենաւն ընդունեց 70 օֆիցերների պորտ-արտուրեան բերդապահ զօրքի կազմից և ափ իջեցրեց նրանց Պորտ-Սաիդ, բացի չորս հոգուց, որոնք ափ իջան Մարսէլ: Արդէնում կտորածներ է անում ժամատախտը, որը օրական 80 զոհեր է տանում:

ԲԷԼԳԻՅԱ, Պաշտօն Պարիզից ճանապարհ ընկաւ Բերլին՝ փոխադրութիւն հրատարակելու վերաբերմամբ բանակցութիւններ շարունակելու համար: Կառավարութիւնը վրձնեց, հակառակ երէկ յայտնված դիտաւորութեան, յետագիւ Գերմանիայի հետ առեւտրական դաշնագրի ճանապարհները, խուսափելու համար շարժանք զօրեղ դիտաւորութիւնից, որը անհրաժեշտ կը դարձնէր սկուպիլինայի արձակումը: Վերջինս կը փակվի եկող հինգաթի թիւ և նորից կը գումարվի երկու ամսից յետոյ հաստատելու համար փոխադրութիւնը և առեւտրական դաշնագրից Գերմանիայի, Բուլգարիայի և Չէրնօբուրայի հետ:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, Գեներալ ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով ներկայ տարվայ փետրվարի 26 ից. «Երկրորդ բանակի ճակատի վրա, ուր գտնվում էի ևս, փետրվարի լոյս 26-ի գիշերը անցաւ առանց պատերազմական ընդհարումների: Գեներալ Գերբէլմանի այդ բանակի ջոկ ուսները նշանաւոր ոյժեր: Եւպոնացիները շարժվեցին մասը այսօր մինչև առաւօտեան 7 ներք շրջապատից նրանց և կարճատեւ կը-

ժամը մնում էր դիրքերի վրա ինչդիտայ կառարանի շրջապատում: Երբորդ բանակից դեռ ևս զեկուցութիւն չեմ ստացել: Առաջին բանակի գործառնները այսօր առաւօտ գտնվում էին 25—30 վերստ դէպի հարաւ-արեւելք Տէլինից: Վերադարձի մասին ամենահեշտակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»:

27 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒԳ, Գեներալ ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1905 թւի փետրվարի 26-ից. «Ներկայ թիւ երեկոյից հակառակորդը արշաւում էր միայն սիբիրեան 3-դ կորպուսի վերջապահ զօրքի վրա: Առաջին բանակը, որ գտնվում էր մի աստիճանով առաջ մնացած բանակներից, շարունակում էր հեռանալ դէպի լոյս բանակի համար նշանակված դիրքը: Երբորդ բանակի հրամանատարի այսօր ստացված զեկուցման համեմատ, այդ բանակի վերջապահ մասը գրաւած ունէր այսօր Մանդարինեան ճանապարհի վրա գտնվող դիրքը 25 վերստ հեռաւորութեամբ Տէլինից: Այդ վերջապահ զորամասի դէմ երեւցին հակառակորդի անշնան առաւելապէս հեծեալ զօրամասերը: Փետրվարի 15-ից սկսած մինչև 26-ը փոխ գրված են 1190 վերաւոր օֆիցերներ և 46391 զինուորներ: Վերադարձի մասին զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»:

28 փետրվարի

ԼՕՆԴՈՆ: Տօկիոյից, փետրվարի 27-ից, պաշտօնական տեղեկութիւնները հաղորդում են, որ երէկ կէսօրից յետոյ ստացված զեկուցման համեմատ, եւպոնական գաւազան զորաբաժիններ, որոնք ետանդով հալածում էին ուսներին գաւազան ուղղութեամբ և նշանաւոր կտրուտ պատճառեցին նրանց, փետրվարի 25-ին ցերեկով գրաւեցին այն գիծը, որ գտնվում է 9 վերստ դէպի հիւսիս Սուխեից և շարունակում են հալածել նրանց: Փետրվարի 26 ին եւպոնական մի զորաբաժին գնաց հիւսիսային ուղղութեամբ և նոյն օրվայ առաւօտեան Պուխէի մօտ հանդիպեց դէպի հիւսիս նահանջող ուսներից զորախմբին: Ձեռնամարտից յետոյ զորախմբը վերջնականապէս շրջապատվեց և անձնատուր եղաւ: Ներկայումս Մուկէնի մօտ եւպոնացիները զբաղված են գործողութիւններով կատարելապէս քայքայման դրութեան հասած ուսները դէմ, որոնք շարունակում են կռիւր և մասամբ էլ անձնատուր են լինում: Փետրվարի լոյս 26-ի գիշերը ստացած զեկուցութիւններ համաձայն, ուս գերիներ թիւը գնալով աճում է: Ուսնեցած տեղեկութիւններ չ'ամփոփ, եւպոնական կորուստների ընդհանուր գումարը փետրվարի 13-ից մինչև փետրվարի 27-ը առաւօտը կազմում է 41,222 մարդ: Մուկէնի մօտ պատերազմի զօրքերի թիւը կազմում է 850,000, հակառակ 460,000-ի, որոնք Լեւանտի մօտ էին և 58,000-ի: Շախէի մօտ Ասում են, որ Մեւրանում եղած եւպոնացիները եւկան այն վայրը, որ գտնվում է եւթը վերստ դէպի հիւսիս և գրաւեցին Լանիլի: Հիւսիսում ուսները գեռ ևս զիմաղրում են: Մասնաւորապէս մտղի ունեցած դէպքերը այնպիսի զօրեղ տպաւորութիւն գործեցին անգլիական մամուլի վրա, որ նա Կուրոպատկինի յետ նահանջումը համարեաւ միաձայն համարում է պատերազմի վախճան, չը նայելով նոր հերթաւորներին այն լուրերի, թէ արված են կամ առաջարկվել են քայքայել խաղաղութեան դաշն կապելու համար: Միմիայն «Սպեկտատուրը» մատնացրեց է անում, որ զորք է որ և է իր թից այն ընդհանուր կարծիքը, որ իր թէ Ռուսաստանը չէ կարող պատերազմը շարունակել Մուկէնի կողից յետոյ: «Սպեկտատուր» խօսքով, եթէ Ռուսաստանը գնար Ամուրի այն կողմը և առեւանաբար միայն պատերազմ վարէր և ստիպէր դրանով Եւպոնիային իր զօրքը պահել Մանչուրիայում, դա խաղաղութիւնից աւելի վատ չէր լինի, իսկ Եւպոնացիները, ընդհակառակ, աւելի վատ կը լինէր, որովհետեւ նա կատարելապէս ուժապառ կանէր իրան, ստիպված լինելով պահել իր ոյժերը Սիբիրում: Եթէ եւպոնացիները այնքան անմիտ կը լինեն, որ կը հետեւն ուսներին դէպի Սիբիր, այն ժամանակ նրանք վիճակից կը լինեն շրջապատից հայր ՄԱ թագաւորի, որը շարժվեց, հենց որ իր յաղթական ընթացքով հասաւ Պորտվա:

ՇԱՆԿՆԱՅ, 27 փետրվարի: Երէկ եւպոնացիները, անցնելով Պուխէ, գտան յետ նահանջող ջոկ ուսների նշանաւոր ոյժեր: Եւպոնացիները շարժվեցին մասը այսօր մինչև առաւօտեան 7 ներք շրջապատից նրանց և կարճատեւ կը-

